




**ՆԱՅԻՆԵՐԸ ԱՐՏԱՐԵՍ ԱՐԵՂՅԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՆՉՊԵՍ  
ԿՈՂՈՊՏԵՑԻՆ ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ**



Երմանացի զինվորներ 1941-ի հունվարին մեկ քանի անգամ Բարեգործականի գրասենյակը կռուցան՝ Մատենադարանի մասին տեղեկություն առնելու: Գերմանացիք արդեն գրաված էին Բարիզի Ռուսական, Լեհական և Հրեական մատենադարանները:

Նուպարյան Մատենադարանին պաշտոնյաները նույնատեսակ բախտ մը գուշակելով՝ կսկսեին մաս մաս փախցնել արժեքավոր հատորները:

Փետրվարի երկրորդ շաբաթուն, առտու մը, մինչ Մատենադարանի վերակացու Պ. Ա. Անտոնյան տակավին անկողինն էր դուռը բանալ տալով ներս կմտնեն շորս գերմանացիներ, մեկ զինվորական և կրսեն թե Պեյլինեն հասած հրամանի մը համաձայն: Մատենադարանին բոլոր գրքերը հոն պիտի փոխադրվին անմիջապես: Միևնույն պահուն՝ երեսուներե շափ Ֆրանսացի բեռնակիրներ կսկսին սնտուկներու մեջ լցնել Մատենադարանին գիրքերը: Նույն գործողությունը կշարունակվի երկու օր ևս: Կլեցվին 168 սնտուկներ, որոնցմե 48 հատը միայն կրնան գամվիլ այդ օրը: Մնացածները բաց կմնան մեկ քանի օր Պերլինեն փալիք կառախումբի մը սպասելով: Մինչև այն առնել՝ Բարեգործականի կողմն գիմումներ կրլան ազդեցիկ անձերու միջոցով: Վերին հրամանը կբարեփոխվի: Պերլինեն հատկապես մեկը կողկվի՝ ընտրություն կատարելու, փոխանակ գիրքերը ամբողջապես հոն փոխադրելու: Այդ անձն էր պրոֆեսոր Արտաշես Արեղյան, որ մեկ քանի տառի առաջ Բարիզ գանվելով՝ ուսումնասիրական աշխատանք կկատարեր Մատենադարանին մեջ:

Պ. Արեղյան կհասնի մարտ ամսվա կիսուն և Բարիզ կմնա երեք շաբաթի շափ, հետը առնելով 18 սնտուկ գիրք փոխանակ 168-ի:

Պ. Արեղյան՝ Մատենադարանի պաշտոնյաներուն խոստացած էր թե պիտի շառնե Հայագիտական գործերն տարբեր գիրքեր և այն տեսակ գիրքեր, որ վենետիկ ու վիեննա տպված էին: Պ. Արեղյան չի հարգեր իր խոստումները և կընտրե գիրքեր ալ, որ բանասիրական կամ հայագիտական նյութի չեն վերաբերի: Կլրավե թերթերու և պարբերականներու հավաքածուներ, մինչև անգամ Մխիթարյան վանքերու հրատարակություններ: Ան տարած է նաև բոլոր գերմաներեն գիրքերը և Խորհրդային Հայաստանի բոլոր գործերը:

Գիրքերու ընտրության միջոցին վեճեր կծագին Պ. Արեղյանի և Մատենադարանի վերակացուին միջև, երբեմն փոթորկալից և «հայհոյական» բառերով: Գերմանացի պետը՝ Տերենկեր կմիջամտե երկու անգամ. հետը բերելով գեսթափոյի պաշտոնյա մը: Այդ ընդամուխյան շնորհիվ կփրկվին մեկ քանի արժեքավոր հավաքածուներ:

Տարված 18 սնտուկները՝ կպարունակեն 1.343 հատոր գրքեր, 950-են ավելի հայերեն, մնացյալը եվրոպական լեզուներով: Նաև 500-ի շափ կաղմված կամ անկաղմ պարբերականներ և 33 հայերեն հին ձեռագիրներ: Ատոնք, բոլորը միասին, ներկա վաճառամբ հաշվելով կարժեն հոկեր 440.000 ֆրանք, եթե կարելի ըլլար զանոնք ձեռք բերել: Կհավատովի թե անոնց մեկ մասը հազվագյուտ են, կամ բացարձակապես «անգտանելի»: Տրված տեղեկության նախով այս կորուստը շատ ավելի մեծ պիտի ըլլար, եթե գերման պաշտոնյաներու շնորհավորելի անհոգութեան հետևանքով Մատենադարանին վերակացուն և օգնականները չի հաջողին սնտուկներեն հանել և փախցնել այլ և այլ թանկագին հրատարակություններ:

«Պայլար»  
(«Արաբեր» հունվար 17 1946 թ. Նյու-Յորք)